Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 4 (345) 17-28 փետրվար, 2014թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Անպատժելիության նախադեպը՝ Սումգայիթ

1988թ. փետրվարյան վերջին եռօրյան հայ սերունդների հիշողության մեջ դեռ երկար կպահպանվի՝ որպես ցավի, կորստի, ինչպես նաեւ ատելության ու վրեժխնդրության ազդարար:

Այդ օրերը ադրբեջանական, ինչու չէ, նաեւ համաշխարհային պատմության համար գրվեցին խայտառակ ու սեւ էջերով, որից ազատվել, գոնե մի քանի սերունդների համար, այլեւս անհնար է:

Հայակերտ ու հայաշեն Սումգայիթում օրեր շարունակ գազանաբար հայի արյուն էին թափում, իսկ տասնյակ հազարավոր հայերի համար ընդամենը մի քանի օրերի ընթացքում խաթարվեց բնականոն կյանքը, ինչն առ այսօր շարունակվում է մնալ խաթարված եւ ընդհատված:

Այն, ինչ քսանվեց տարի առաջ տեղի ունեցավ Սումգայիթում, իրավական ու համամարդկային լեզվով կոչվում է ցեղասպանություն:

20-րդ դարասկզբի թուրքը ոչնչով չէր տարբերվում դարավերջի ադրբեջանցի թուրքից, ով նույն «ոգով ու կարգավիճակով» թեւակոխել է 21-րդ դար:

Սակայն մինչ օրս այդ ցեղասպանության համար պատասխանատվություն չի կրել ադրբեջանական կողմը, ավելին՝ անպատժելիության մթնոլորտն այս քսանվեց տարիների ընթացքում ծնել է բազում չարիքներ՝ իրենց ծայրագույն դրսեւորումներով: Ադրբեջանի կողմից հայտարարված պատերազմը Արցախի խաղաղ բնակչության նկատմամբ նույնպես ցեղասպանության կիրառում էր, որը կասեցվեց արցախահայության ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ:

Այս օրերին, երբ համայն հայությունը աշխարհի տարբեր վայրերում դատապարտում է Սումգայիթյան ցեղասպանությունը, ցեղասպան կողմն անցել է քարոզչական եւ տեղեկատվական նորագույն անբարոյականության՝ «դատապարտելով եւ աշխարհով մեկ սգալով Խոջալուի ցեղասպանությունը»:

Հորինված սուտը պատմական անբարոյականություն է, որով փորձում են կասեցնել եւ շեղել միջազգային հանրության ուշադրությունը իրական պատմության՝ Սումգայիթի ցեղասպանության թեմայից:

Սումգայիթի հրեշավոր ոճրագործության՝ ցեղասպանության հուշերով մինչ օրս մեր կողքին ապրում են մարդիկ, որոնց հուշերում եւ խոսքերում աննկարագրելի տեսարաններ են, անհավատալի, բայց իրական:

Սումգայիթում տեղի ունեցածը մարդկային վարքագծի հրեշավոր դրսեւորում է, որը դժվար է նույնիսկ դիտել կամ ունկնդրել, բայց մարդիկ քսանվեց տարի առաջ ապրել են այդ օրերը:

Մարտահրավերը, որն արդեն մեկ դար ուղղված է մեր ժողովրդին, դեռ արդիական է, եւ այն մեզ ավելի պետք է սթափեցնի այլեւս չկրկնվելու համար:

Պատերազմից, ագրեսիայից, ամեն տեսակ ոտնձգությունից խուսափելու համար պետք է օր օրի պատրաստվել: Ինչքան պատրաստ լինենք պատերազմին, այնքան հեռու կլինի պատերազմը:

Արցախում նշվեց ՀՅԴ հիմնադրման 123-ամյակը

Փետրվարի 21-ին Արցախում նշվեց Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադրման 123-ամյակը: Դաշնակցության հիմնադրման 123-ամյակին նվիրված միջոցառումներ են տեղի ունենում աշխարհի տարբեր երկրներում սփռված կուսակցության կառույցներում:

123 տարի առաջ հայ ժողովրդի ու Հայաստանի դարավոր ստրկության եւ դրան հետեւող ազգային կործանման ստույգ վտանգի դեմ պայքարելու եւ հայ ժողովրդի նոր երազներն ու իղձերը հաղորդելու նպատակով ծնունդ առավ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը: Միաժամանակ ե՛ւ հեղափոխական, ե՛ւ ազգային կազմակերպության իր նկարագրով՝ ՀՅԴ-ն հանդիսանում է այն կազմակերպությունը, որին վիճակված է եղել բախտորոշ դերակատարություն ունենալ հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ:

Ստեփանակերտի Մշակույթի եւ երիտասարդության պալատում ՀՅԴ 123-ամյակի միջոցառմանը ներկա էին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, ՀՅԴ ԳՄ նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր Միքայել Մանուկյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, օրենսդիր եւ գործադիր մարմնի ներկայացուցիչներ, կուսակցական ընկերներ, հասարակական եւ քաղաքական ոլորտի ներկայացուցիչներ:

ՀՅԴ հիմնադրման 123-ամյակին նվիրված միջոցառմանը ելույթներով հանդես եկան Դաշնակցության Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱԺ նախագահ, ԱԺԿ կուսակցության նախագահ Աշոտ Ղուլյանը, Ազատ հայրենիք կուսակցության գրասենյակի տնօրեն, ԱԺ փոխնախագահ Արթուր Թովմասյանը, ՀՅԴ ԱԵՄ-ի վարիչ մարմնի ներկայացուցիչ Վահրամ Հովսեփյանը:

Տոնի առթիվ Բեկորի հուշաքարի մոտ տեղի ունեցան երդման եւ խոստման արարողություն: Մի խումբ երիտասարդներ համալրեցին ՀՅԴ, ինչպես նաեւ՝ Արցախի երիտասարդական միության շարքերը:

Հատկանշական է, որ ընկերները երդվեցին Արցախի «Անտառ» կոմիտեի առաջին դրոշի վրա, որը 1989-ին ընկեր Հրայր Մարուխյանը նվիրել էր ՀՅԴ Արցախի կառույցին:

Դրոշի վրա ժամանակին երդվել են տասնյակ ընկերներ, այդ թվում՝ Աշոտ Բեկորը, Վաղարշակ Առուշանյանը, Արկադի Կարապետյանը, Թելման Հարությունյանը, նախկին կուսակցականներ Ժաննա Գալստյանը, Սամվել Բաբայանը եւ այլոք:

1890 թվականից սկսած՝ Թուրքիայի բռնատիրության դեմ իր պայքարով, Հայ Դատի արդարացի լուծումը միջազգային հրատապությամբ օրակարգի վերածելով, Սփյուռքը ազգային տեսակետից կենդանի պահելու իր գոյապայքարից մինչեւ Արցախի ազատագրական պայքարն ու Հայաստանի անկախության վերահաստատումը, եւ ներկայում՝ որպես Անկախ Հայաստանի Հանրապետության եւ Արցախի զարգացման, հզորացման ու արմատական բարեկարգման համար պայքարող խորհրդարանական համահայկական կուսակցություն, ՀՅԴ-ն հաստատուն է մնում իր ազգային ու հասարակական հավատամքին եւ քաղաքական ու տնտեսական առաջադրանքներին:

«ԱՊԱՌԱԺ»

Դաշնակցության համար պայքարը երբեք դադար չի ունեցել. Դավիթ Իշխանյան

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը բոլորել է իր 123-ամյակը: Անցած ամիսներին սփյուռքում, որտեղ գործում են ՀՅԴ կառույցներ, Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում, Ջավախքում տոնել են Հայ Յեղափոխական Դաշնակցության 123-ամյակը:

Կարդացեք 2-րդ էջում

Չպետք է թուլացնել ջանքերը. Ք. Տրիանտաֆիլիդես



Հաշվի առնելով վերջերս ավելի ու ավելի մեծ ծավալներ ընդգրկող անդրբեջանական հակահայ քարոզչությունն արտասահմանյան երկրներում՝ «Ապառաժ»-ը ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի միջոցով հարցադրումներով դիմել է Եվրախորհրդարանում Կիպրոսը ներկայացնող պատգամավոր...

Կարդացեք 2-րդ էջում

Դաշնակցության համար պայքարը երբեք դադար չի ունեցել. Դավիթ Իշխանյան

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանի ելույթը ՀՅԴ 123-ամյակի հանդիսավոր միջոցառմանը

Մեծարգո նախագահ Արցախի Հանրապետության, Գերաշնորհ Սրբազան Հայր, պետական այրեր, հարգելի հյուրեր, սիրելի ընկերներ, ազատատենչ երիտասարդներ:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը բոլորել է իր 123-ամյակը: Անցած ամիսներին սփյուռքում, որտեղ գործում են ՀՅԴ կառույցներ, Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում, Ջավախքում տոնել են Հայ Յեղափոխական Դաշնակցության 123-ամյակը: Տոնել են՝ վերահիմաստավորելու մեր անցյալը, տոնել են՝ ներկայի եւ ապագայի խնդիրների լուծմանը պատրաստակամության երդում տալով: Նույն պատրաստակամությամբ է ՀՅԴ Արցախի կառույցն այսօր տոնում Դաշնակցության 123-ամյակը: Այս տոնը բոլորինս է: Ուրեմն, թույլ տվեք շնորհավորել բոլորիդ տոնի կապակցությամբ:

Հայրենակիցներ, այս օրերին լրացել է Արցախյան շարժման 26-ամյակը: Առիթը օգտագործելով՝ ուզում եմ շնորհավորել բոլորիս՝ նաեւ Արցախի Վերածննդի տոնի կապակցությամբ:

Փետրվարյան շնորհավորանքներս թերի կլիներ, եթե բոլորիդ չշնորհավորեի նաեւ 1921 թվականի փետրվարյան համաժողովրդական ապստամբության կապակցությամբ: Մեր ժողովրդի մեջ դեռեւս պարզ ու թափանցիկ չեն լուսաբանված 1921 թ. փետրվարյան ապստամբության էությունն ու նրա դասերը, բայց եւ այնպես, այն իր համաժողովրդական պոռթկումով նույն նպատակն էր հետապնդում՝ ինչ 1988-ը: Մեր ժողովրդի բովանդակ շահերը ոտնահարող որեւէ երեւույթ անընդունելի համարելով, լինի ցեղասպան թուրքի, բոլշեւիկ ռուսի կամ համայնավոր ազերու կողմից, այդ պոռթկումն ազատ ու արդար ապրելու դրսեւորման հետեւանքն էր՝ ի պաշտպանություն սեփական իրավունքների ու շահերի:

Չլիներ 1890 թ. Քրիստաֆոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի եւ Ստեփան Զորյանի՝ Հայ Յեղափոխական Դաշնակցություն հիմնելու սուրբ նախաձեռնությունը, չլիներ 1918 թվականի մայիսի 28-ը, չլիներ 1921 թվականի փետրվարյան ապստամբությունը, չէր լինի 1967 թվականը, չէր լինի նաեւ 1988-ը, 1991-ը: Ուրեմն հպարտանանք, որ սերունդն ենք 100-ամյա ազատատենչ ոգին կրող մեր պապերի ու հայրերի:

Դաշնակցության որեւէ ամյակի տոնակատարությունը փառաբանության կամ գովաբանության հավաք չէ, այլ հաշվետվություն՝ արվածի ու չարվածի համար, անդրադարձ՝ առկա հիմնախնդիրներին ու մարտահրավերներին:

Բազմիցս է փորձվել նսեմացնելու Դաշնակցության դերակատարությունը՝ մղելով նրան լուսանցք, վարկաբեկելով ու ապատեղեկատվություն տարածելով՝ ինչպես նրա անցյալի, այնպես էլ ներկայի վերաբերյալ:

Մեր ազգային հերոսներին 70 տարի անընդմեջ մեզ ներկայացնում էին որպես ազգի թշնամիներ, դավաճաններ, մեր պատմական հիշողությունն ուղղակի ջնջում էին ոչ միայն մեր դասագրքերից, այլ նաեւ՝ մեր ուղեղներից: Նենգորեն փորձվում էր նույնիսկ վերացնել

մեր ազգային արժեհամակարգը, հատկապես՝ այդ արժեհամակարգը իր մեջ ամփոփող Դաշնակցությունը: Ես նպատակ չունեմ անցյալի վերքերը քրքրելու, նույնիսկ՝ ոչ վաղ անցյալի, բայց մի բան այսօր հստակ է. այն նպատակը, որ արտաքին ուժերն ունեին՝ մեր ազգային դիմագիծը փոխելու, այսօր էլ իրենց օրակարգում է: Այն, որ դա նրանց մասամբ հաջողվեց, նույնպես իրականություն է: Իսկ այդ ամենի հետեւանքը մեր ժողովրդի մեջ ձեւավորված վերաբերմունքն է իր սեփական ազգային կուսակցության նկատմամբ: Դաշնակցության ամբողջական ընկալումը այդպես էլ թերի մնաց հայ ժողովրդի մեջ՝ նրա նկատմամբ ունենալով անվստահություն, կասկածամտություն:

Այնուհանդերձ, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը եւ մասնատված հայրենիքի վերամիավորումը մշտարթուն պահելով սերունդների մեջ, Դաշնակցությունն այն հասցրեց մեր սերնդին:

Հպարտությամբ ուզում եմ շեշտել, որ այս օրերին լրանում է նաեւ ՀՅԴ կառույցի՝ Արցախում վերահաստատման 25-ամյակը: Վերահաստատման, որովհետեւ քչերը գիտեն, որ 1905-1921 թվականներին ՀՅԴ Արցախի կառույցը, իր շուրջը համախմբելով հազարավոր արցախցի հերոսների, փրկեց արցախցիներին ցեղասպանությունից ու տեղահանությունից: Ավելին, 1918-ի հուլիսին Ղարաբաղի առաջին համագումարում վերահաստատվեց, որ Ղարաբաղը մասն է կազմում Հայաստանի Հանրապետության: Այդ ոգին փոխանցվեց մեր սերնդին, եւ շատերը Դաշնակցությանն անդամագրվելու ճանապարհով փորձեցին իրականություն դարձնել տասնամյակների երազանքը՝ Արցախը Մայր հայրենիքին վերամիավորելու սուրբ գործը:

Դահլիճում ներկա են շատ ընկերներ, ովքեր իրենց ուսերին են վերցրել այդ ծանր ու պատվաբեր առաքելությունը: Ոմանք նույնիսկ այսօր էլ, մաս չկազմելով կուսակցական կառույցին, շարունակում են կրել այդ գաղափարախոսությունը, ոմանք էլ իրենց անունները թողել են մեր անմահության հուշամատյաններում:

Փա՛ռք նրանց:

Մենք՝ արցախցիներս, արդեն 26 տարի՝ դարձել ենք առանցքը համազգային համախմբման, առաջամարտիկը միացյալ Հայաստանի վերակերտման, դրոշակակիրը անկախության: Մենք այսօր էլ ունենք այդ պատասխանատվության ու հանձնառության պատրաստակամությունը եւ կամքը:

Մենք անհրաժեշտություն ունենք մեր նվազ հնարավորությունները նորից մեկտեղելու եւ միասին մեկ ճակատով գործելու: Պատմությունը եւ մեր սերունդները մեզ չեն կարող ներել տրված պատմական հնարավորությունը ճիշտ եւ նպատակին չօգտագործելու համար:

Մեր առջեւ ծառացած են լուրջ մարտահրավերներ՝ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչում, փխրուն զինադադար եւ վայրենահաչող թշնամի, սոցիալ-տնտեսական ծանր վիճակ, մտահոգող ժողովրդագրական իրավիճակ:

ՀՅԴ-ն առկա մարտահրավերներին նայում է բաց աչքերով եւ պատրաստակամ՝ մասնակիցը լինելու դրանց լուծմանը:

Ժամանակն է, որ յուրաքանչյուր քաղաքական ուժ, քաղաքական գործիչ պատասխանատու լինի իր ստանձնած պարտականությունների համար՝ լինի դա ընդդիմություն, թե իշխանություն:

Մեզ՝ Դաշնակցականներիս համար, առավել քան պարտավորեցնող հանգամանք կա: Մեր ժողովուրդը հենց Դաշնակցությունից է պահանջում սոցիալական արդարություն, ժողովրդավարության ամրապնդում, հավասարության սկզբունքների պահպանում:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, լինելով ընկերավարական /սոցիալիստական/ կուսակցություն, պատրաստակամ է՝ լինելու սոցիալական արդարության երաշխավորը:

Դաշնակցությունը, լինելով ազգային կուսակցություն, իր ազգային արժեհամակարգով ունի լուրջ առաքելություն թե՛ ներքաղաքական եւ թե՛ արտաքին քաղաքական ասպարեզում:

123-ամյա Դաշնակցության կենսագրությունը վկայում է, որ նա միշտ եղել է պայքարի թատերաբեմում: Դաշնակցության համար պայքարը երբեք դադար չի ունեցել:

Քանի դեռ հայ ժողովուրդն ունի արդար դատ, ազատ ապրելու իրավունք եւ ցանկություն, Դաշնակցությունը ժողովրդի կողքին է՝ միշտ պատրաստակամ պայքարի բոլոր թատերաբեմերում լինելու առաջամարտիկ:

Լինենք իշխանություն, թե ընդդիմություն՝ Դաշնակցությունն ունի իր առաքելությունը եւ նպատակը՝ Միացյալ, Ազատ եւ Անկախ Հայաստանի կերտումը: Արցախը այդ նպատակի մի մասնիկն է...

Փառք մեր ազատության եւ անկախության ճանապարհի բոլոր նահատակներին:

Կեցցե՛ հայ ժողովուրդը:

Կեցցե՛ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը:

Չպետք է թուլացնել ջանքերը. Ք. Տրիանտաֆիլիդես

Հարցազրույց Եվրախորհրդարանի պատգամավորի հետ



Հաշվի առնելով վերջերս ավելի ու ավելի մեծ ծավալներ ընդգրկող անդրբեջանական հակահայ քարոզչությունն արտասահմանյան երկրներում՝ «Ապառաժ»-ը ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի միջոցով հարցադրումներով դիմել է Եվրախորհրդարանում Կիպրոսը ներկայացնող պատգամավոր Քիրիաքոս Տրիանտաֆիլիդեսին, ով անցյալ տարի հյուրընկալվել է Արցախում :

- Հարգելի պրն Տրիանտաֆիլիդես, ինչպիսի՞ն եք տեսնում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի՝ Ադրբեջանական ագրեսիայից հետո անցած 25 տարիների պայքարը՝ ուղղված իրենց երկրի վերակառուցմանը:

- Լեռնային Ղարաբաղի ժողովրդի պայքարը՝ մի հերոսական ժողովրդի արժանի ջանք է՝ վերակառուցել իր երկիրը եւ միավորել ներկան անցյալի հետ: Իրենց երկիրը, դաշտերը, սարերն ու քաղաքները իրենց են պատկանում: Իրենց ապագան իրենց է պատկանում, եւ նրանց հավատարմությունն իրենց պայքարին՝ դրա ամենամեծ երաշխիքն է:

- Արդյո՞ք ժամանակը չէ, որպեսզի Եվրոպան, հատկապես Եվրամիությունն ուղղակիորեն մասնակցեն եւ ներգրավվեն Արցախի հարցում երկարատեւ եւ արդար լուծում գտնելու համար:

- Ժամանակն է, որպեսզի Եվրամիությունը համագործակցի տարածաշրջանում հետաքրքրություն ունեցող երկրների հետ՝ հակամարտությանը երկարատեւ եւ արդար լուծում տալու համար: Այնուամենայնիվ, չպետք է անտեսել Եվրամիության ներքին թույլ կողմերը, որոնցից է նաեւ նրա ընդհանուր արտաքին քաղաքականություն ունենալու անկարողությունը: Այսպիսով, թեկուզեւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն արդարացի է իր ակնկալիքների մեջ՝ սպասելով Եվրամիությունից դրական մասնակցություն Արցախի խնդրի լուծման համար, սակայն իրենց հիմնախնդրի լուծմանը հասնելու համար՝ չպետք է թուլացնեն իրենց ջանքերը, ինպես նաեւ իրենց ճշմարիտ կոչը՝ ուղղված միջազգային հանրությանը:

Դաշնակցությունը սքանչելի գործ է անում. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյան



Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ելույթի խոսքը ՀՅԴ 123-ամյակի հանդիսավոր միջոցառմանը

Այսօր մենք այստեղ ենք՝ նշելու մեր ավանդական Հայ կուսակցության 123-ամյակը: Արցախյան պատերազմի դաժան տարիներին մեր արցախցիները գյումրեցիների պես չկորցրին իրենց հումորի զգացումը, եւ դա շատ լավ է: Մեկ էլ տեսնում էիր դաժան օրերին կատակ էին անում, անեկդոտներ էին հորինում, որը խոսում էր մեր անկոտրուն ոգու մասին: Հիմա մի օրինակ բերեմ, թե ինչու եմ դա ասում:

Գյուղերից մեկում մեր տարեց ղարաբաղցիները, գյուղամիջին նստած, նարդի էին խաղում: Տարեց մի մարդ է գալիս՝ սպիտակ մորուքով:

- Բարեւ...

- Բարեւ... Համեցիր:

Թեյ են տալիս, հարցնում՝ անունդ ինչ է...

- Վարդան..

- Քանի տարեկան ես:

- 92

Իսկ այդ տարեց մարդիկ 120-125 տարեկան էին: Նրանցից մեկը նայում է ու ասում.

- Էս խոխան հուվա, վեր մեր կողքին նստե:

Հիմա, Ղարաբաղի չափանիշներով, Դաշնակցությունը հասել է նորմալ ղարաբաղցու հասուն տարիքի, այնպես որ՝ մեր Դաշնակցությունն անցել է իր ուրույն ճանապարհը:

Այսօրվա ձեր բաժանած փոքրիկ գրքույկում գրված է՝ Դաշնակցությունը նաեւ պատմություն է: Այո, իհարկե, Դաշնակցությունն ունի իր ուրույն պատմությունը:

Երբ որ մի մարդ, մի կազմակերպություն ճանապարհ է անցնում, երկար ճանապարհ, իսկ 123 տարին երկար ճանապարհ է, ոտքերը կարող են հոգնել, վերքոտվել, կարող է արեւահարվել: Բայց Դաշնակցությունը կարողացավ ամուր կերպով անցնել այդ ճանապարհը, որը լի էր բազմաթիվ դժվարություններով եւ մարտահրավերներով՝ ազատագրական պայքար 90-ական թվականներին, Ադանայի կոտորած, Ցեղասպանություն, Առաջին հայկական հանրապետություն, բանակի, պետության ստեղծում, գոյատեւում սփյուռքի պայմաններում, քանզի արգելված էր Սովետական Միության տարածքում:

Այս ամենին Դաշնակցությունը դիմացավ: Երեւի դրա գաղտնիքն այն է, որ գաղափարի կուսակցություն է, ինչը ճիշտ է, ազգային է, որը շատ հրապուրիչ է շատ հայերի համար, եւ, ամենահետաքրքիրը, դասական իմաստով, որպես կուսակցություն՝ խիստ դիսցիպլինա ունի, եւ, միաժամանակ, դրա հետ ֆենոմենալ մի երեւույթ ունի՝ ճկուն շրջանային ղեկավարություն:

Ես կարծում եմ՝ գոյատեւման գաղտնիքներից են դրանք: Պիտի ասեմ, որ Դաշնակցությունը մեծագույն ներդրումներ ունի հայրենիքի կերտման եւ ազգապահպանման հարցերում: Բազմաթիվ փառավոր անձեր է ծնել ազգի համար: Հաճախ լինելով սփյուռքի տարբեր օջախներում, կարող եմ վստահորեն ասել, մեծագույն հիացմունքով եւ երախտագիտությամբ՝ հայապահպանման, ազգապահպանման գործում իսկապես Դաշնակցությունը սքանչելի գործ է անում: Բոլորն էլ հայախոս են, որը շատ խրախուսելի է: Արցախում ՀՅԴ-ն 25-րդ հոբելյանն է նշում, որի առիթով շնորհավորում եմ ե՛ւ ողջ Դաշնակցությանը, ե՛ւ Արցախի Դաշնակցությանը, մեր սիրելի ընկերներին, մեր մարտական ընկերներին: Ինչպես պատմության ընթացքում, մեր օրերին էլ Դաշնակցությունը նետվեց մարտի դաշտ, զենքը ձեռքին, հայկական երազանքներով. հայրենիք, ազատություն, անկախություն եւ մեկ երազանք, որ բոլորիս համար շատ հարազատ է՝ ամբողջական Պատմական Հայաստան:

Ինչպես պարոն Թովմասյանն ասաց՝ օրակարգի 4 կարեւոր հարցերը օրագրից չեն իջնում, եւ դա լավ է: Եվ մենք, որպես հայեր, այդ երազանքները պիտի առաջ տանենք: Որքան էլ երկար լինի մեր ազգի ճանապարը՝ 10 հազար տարի, 15 հազար տարի, մենք չպիտի հոգնենք, պիտի այդ երազանքները բոլորս անպայմանորեն կյանքի կոչենք: Ես, որպես եկեղեցական, իհարկե, որպես ոչ կուսակցական՝ գիտեմ գնահատել ե՛ւ ոչ կուսակցականներին, ե՛ւ բոլոր կուսակցություններին ե՛ւ Դաշնակցությանը, որի կրկնակի հոբելյանի առիթով մենք այսօր այստեղ ենք:

Շնորհավորում եմ, մաղթում եմ՝ որպես գաղափարի կրող կուսակցություն, շարունակեք կյանքի կոչել բոլոր այդ նվիրական իդեաները, որոնք սատարելու են մեր ազգի միասնությանը, ոգուն, հավատքին եւ հաղթանակին: Եւ մենք՝ բոլորս միասին, պարտավոր ենք ապագայում տոնել մեր հայոց մեծագույն, ամբողջական Հայաստանի հաղթանակը, որը դուք եք երազում, որը մենք ենք երազում, որին բոլորս ծառայում ենք:

Շնորհավորում եմ...

ՀՅԴ ճանապարհը ազգային նվիրումի ճանապարհ է. Աշոտ Ղուլյան

ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահ, Արցախի ժողովրդավարական կուսակցության նախագահ Աշոտ Ղուլյանի ելույթը ՀՅԴ 123-ամյակի հանդիսավոր միջոցառմանը

Ուրախ եմ՝ եւս մեկ անգամ ներկա գտնվել ՀՅԴ տարեդարձին նվիրված միջոցառմանը եւ նորից շնորհավորել ձեզ՝ դահլիճում ներկա գտնվողներին եւ նրանց, ովքեր այսօր այստեղ չեն, բոլորիս համար նշանակալից իրադարձության՝ ՀՅԴ կուսակցության հիմնադրման 123-րդ տարեդարձի առթիվ:

Ուրախ եմ՝ այդ շնորհավորանքը հղել անձամբ իմ անունից եւ Արցախի ժողովրդավարական կուսակցության անունից: Վերջին երկու տասնամյակների մեր համագործակցությունը, կարծում եմ, վկայությունն է այն բանի, որ Արցախի քաղաքական դաշտի դերակատարները կարող են համատեղ քաղաքական, տնտեսական, սոցիալական բազմաթիվ խնդիրների լուծումներ գտնել, համատեղ առաջ տանել այդ խնդիրների իրականացումը:

Անժխտելի է ՀՅԴ ընդգծված դերակատարությունը հայ ժողովրդի ազգային գաղափարախոսության ու քաղաքական մտքի ձեւավորման, հայ քաղաքական դաշտի կայացման եւ զարգացման ասպարեզում: Ի սկզբանե, իր գործունեության ամբողջ ընթացքում իր ողջ ներուժը նպատակաուղղելով հայ ժողովրդի շահերի պաշտպանությանը, կուսակցությունն անցել է մի ճանապարհ, որն այլ կերպ չենք կարող գնահատել, քան՝ ազգային նվիրումի ճանապարհ:

Մեր ազգային տարեգրության մեջ ՀՅ Դաշնակցության դերը անխզելիորեն կապված է մեր ժողովրդին պարտադրված պատմական անարդարությունների դեմ պայքարի հետ: Դժվար է թերագնահատել նրա ավանդը հայոց ազգային ազատագրական շարժումների կազմակերպման, կորուսյալ պետականության վերականգման, մասնավորապես՝ Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադրման գործում: Նշանակալից է կուսակցության մասնակցությունը 20-րդ դարավերջի հայոց ազգային վերազարթոնքին եւ ազգային-ազատագրական պայքարին, նրա ներդրումն արցախյան ձեռք բերված հաղթանակներում, հայոց անկախ, ինքնիշխան զուգապետության՝ ՀՀ եւ ԼՂՀ կայացման եւ ամրապնդման, համազգային նպատակների շուրջ աշխարհասփյուռ հայության համախմբման, Հայ Դատի միջազգայնացման ասպարեզում:

ՀՅԴ արցախյան կառույցը եւ, մասնավորապես, ՀՅԴ խմբակցությունը, ակտիվորեն համագործակցելով ԼՂՀ խորհրդարանում ներկայացված մյուս քաղաքական կուսակցությունների հետ, արդեն 20 տարուց ի վեր արժանի ավանդ է բերում ԼՂՀ զարգացմանը, ամրապնդմանն ու հզորացմանը:

Վերստին շնորհավորելով նշանակալից տարեդարձի առթիվ, ՀՅԴ մեր գործընկերներին մաղթում եմ ամենայն հաջողություններ՝ ի շահ համազգային երազանքների իրականացման:

Անուրանալի է Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության դերակատարությունը. Արա Հարությունյան

Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադրման 123-ամյակի առթիվ «Ազատ հայրենիք» կուսակցության նախագահ, վարչապետ Արա Հարությունյանը շնորհավորական ուղերձ է հղել, որում մասնավորապես ասված է.

«Արեւմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը հայ քաղաքական դաշտ բերեց ազգային-ազատագրական շարժման ծավալման որոշակի հանգրվանում կազմավորված Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությանը, որի քաղաքական գլխավոր նպատակը հիմնվում է անառարկելի իրավաքաղաքական փաստերի վրա, փաստեր, որոնք ժխտելու բոլոր փորձերը հակասության մեջ են ոչ միայն պատմական իրողությունների, այլեւ միջազգային իրավունքի նորմերի հետ:

Այսօր, երբ 123 տարվա հեռավորությունից նայում ենք Հայ Յեղափոխական Դաշնակցության անցած պատմական ուղուն, ակնառու են դառնում նրա անկյունաքարային դերակատարությունն ու ավանդը ազգի ամենավճռորոշ պահերին՝ Հայկական հարցի լուծման փորձություններից մինչեւ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի հորձանուտ: Մինչխորհրդային ժամանակաշրջանում գործող կուսակցություններից՝ Դաշնակցությունն էր, որ իր ուսերին վերցրեց ազգը թուրքական լծից ազատագրելու անհավասար պայքարի բեռը: Ուստի, անժխտելի է նրա դերակատարությունը Հայկական Առաջին հանրապետության կազմավորման գործընթացում: Եվ թերեւս պատահական չէ, որ այդ ժամանակաշրջանի Հայաստանի Հանրապետության պատմությունը խորհրդահայ պատմագրության մեջ հաճախ նույնացվում էր ՀՅԴ պատմության հետ՝ կոչվելով «Դաշնակցականների Հանրապետություն»...

Մերօրյա՝ ազգային արժեքների մոռացման, համաշխարհայնացման պայմաններում անուրանալի է Հայ Յեղափոխական Դաշնակցության դերակատարությունը Սփյուռքում՝ ազգապահպանման, հայապահպանման գործընթացներում:

Արցախյան գոյապայքարի միաձուլման քուրայում կրկին իրար հանդիպեցին ժողովուրդն ու Հայ Յեղափոխական Դաշնակցությունն կուսակցությունը՝ բռունցքվելով ընդդեմ թշնամու: Արցախում ՀՅԴ-ն առաջիններից մեկն էր, որ ստանձնեց հայ ժողովրդի զինված ազատագրական պայքարը կազմակերպելու պատասխանատվությունը:

Այսօր եւս՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության Արցախի կառույցը, կուսակցության՝ դարից էլ երկար ձգվող կուսակցական պատմության պատասխանատվությունն ուսերին կրելով, մասնակիցն է նորաստեղծ պետության շինարարությանը՝ պայքարող մարտիկի իր ուրույն տեսակով հային վերադարձնելով հայրենիքին վերատիրանալու, ազատ ու անկախ ապրելու գաղափարը, գաղափար, որ կոչվում է Հայ Դատ՝ իր մեջ ներառելով Հայոց Մեծ Եղեռնի հատուցումից մինչեւ Ղարաբաղյան հիմնախնդրի վերջնական լուծում:

Պատմական այս ամբողջ պատասխանատվությամբ համակված՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը կերտել է կուսակցականության իր բանաձեւը, որն առավել հայրենասերի, պայքարողի հոգեվիճակ է, քան պարզապես կարգավիճակ: Այդու, այս եւ գալիք հարյուրամյակներում թող արդիական մնա կուսակցականի՝ նման մարտունակ ու ազգասեր ոգին:

«Ազատ հայրենիք» կուսակցության եւ անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությանը պատկառելի տարեդարձի առթիվ՝ մաղթելով որդեգրած սկզբունքներից ու գաղափարախոսությունից անշեղ ապագա»:

Արցախահայության վերածնունդ՝ փետրվարի 20

70 տարիների ճնշումից հետո՝ 1988 թվականին զարթոնք ապրեց արցախահայությունը: Տարբեր ժամանակահատվածներում արցախահայությունը փորձել է որոշակի քայլեր ձեռնարկել իր իրավունքները պաշտպանելու եւ իր բողոքն արտահայտելու համար, եւ, բնականաբար, ինչ-ինչ հանգամանքներում այն սառեցվել է ու համապատասխան արդյունք չի ունեցել: Այն, ինչ կատարվել է 1988 թվականի փետրվարյան օրերին, ազգային զարթոնք էր:

Դեռ 1986-ից նախապատրաստական աշխատանքներ էին տարվում՝ վերջնականորեն առանձնանալու Ադրբեջանից եւ միանալու Մայր հայրենիքին: Խորհրդային, ադրբեջանական իշխանական լծակներն ու գործակալները ամեն կերպ ամեն միջոց կիրառեցին՝ խեղդելու Արցախում սկիզբ առնող ալիքը:

Փետրվարի 13-ը եղավ ընդհատակյա շարժման եւ ժողովրդի կամարտահայտության զարթոնքը: Մեկ շաբաթ հրապարակային ցույցերին եւ երթերին զուգահեռ տեղի ունեցան ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների շրջանային եւ Ստեփանակերտի քաղաքային խորհուրդների նստաշրջաններ, որոնք պահանջեցին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միավորելու օրակարգով: Փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհրդի 67 պատգամավորներ գրավոր պահանջեցին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Փետրվարի 20-ի մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը կայացրեց պատմական որոշումը՝ «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսեւորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին եւ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:

Վերոհիշյալ որոշումն ուղարկվեց ինչպես Բաքու, այնպես էլ Երեւան եւ Մոսկվա:

Արցախում սկիզբ առած շարժումը, ունենալով միանգամայն օրինական եւ սահմանադրական «պաշտպանվածություն», հակադրվելով անօրինական, ագրեսիվ եւ զինված դիմադրության, վերածվեց ազգային ազատագրական շարժման, ինչն էլ հետագայում դարձավ ազգային ազատագրական պայքար:

Խորհրդային Ադրբեջան պետությունն իր ամբողջ ներուժով այս խնդրանքին պատասխանեց՝ պատերազմ հայտարարելով իր իսկ վարչական ենթակայության մեջ գտնվող ժողովրդին:

Պատվով կրելով իր վրա դրված գործը, պատերազմի դաշտում թողնելով հայության ավելի քան վեց հազար քաջորդիների կյանքը, համայն հայությունն արժանապատիվ դուրս եկավ մեզ պարտադրված պատերազմից, հռչակեց Արցախի անկախ հանրապետությունը:

Ուղիղ 26 տարի է անցել այն պատմական պահից, երբ արցախահայությունը վճռական ոչ ասեց 70 տարիների լծին՝ սկիզբ դնելով նոր Վերածննդի:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

ՀՅԴ-Ն անցյալի, ներկայի եւ ապագայի կուսակցություն է. Արթուր Թովմասյան

Փետրվարի 21-ին Ստեփանակերտում կազմակերպված՝ ՀՅԴ 123-ամյակի հանդիսավոր միջոցառմանը շնորհավորական խոսք է ասել «Ազատ Հայրենիք» կուսակցության անդամ, ԼՂՀ Ազգային Ժողովի փոխխոսնակ Արթուր Թովմասյանը:

«Քիչ առաջ ցուցադրված տեսաերիզի վերջում գրվեց, որ ՀՅԴ-ն ապագայի կուսակցություն է, ես կասեի, որ ՀՅԴ-ն անցյալի, ներկայի եւ ապագայի կուսակցություն է:

Դաշնակցությունն ունի ձեւավորված օրակարգ՝ Հայ Դատ, Մեծ Եղեռնի ճանաչում, հայապահպանություն, ազգապահպանություն, արցախյան հիմնախնդրի վերջնական լուծում: Աշխարհում գործող խորհրդարաններում օրենքները մեկ օրակարգի հարց են, մեկ-երկու ընթերցում, որոշներն ունեն երրորդ ընթերցում: ՀՅԴ-ն միակ կուսակցությունն է, որ օրակարգի բոլոր հարցերը 123 տարի ընթերցվում են եւ բեմից չեն իջնում:

Շնորհավորում ենք ՀՅԴ 123-ամյակը»:

«Դաշնակցություն» խմբակցությունը ԱԺ-ում կրկին բարձրացրեց գազալցակայանների գազի գնի հարցը

Կառավարության հետ հարց ու պատասխանի ընթացքում ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունը եւս մեկ անգամ բարձրացրեց գազալցակայաններում գազի գնի հարցը: ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Կամո Բարսեղյանը կառավարությանը հիշեցրեց, որ մի քանի անգամ հարցը բարձրացվել է խմբակցության կողմից, սակայն առ այսօր որեւէ էական քայլեր չի ձեռնարկվել: Եվ հարց է ուղղել կառավարությանը, թե ինչ աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ:

Արտադրական ենթակառուցվածքների նախարար Հակոբ Ղահրամանյանը տեղեկացրեց, որ վարչապետի հանձնարարականով ստեղծվել է աշխատանքային խումբ, որը պետք է ուսումնասիրի շուկան եւ հանդես գա նոր առաջարկներով:

Ի դեպ, աշխատանքային խմբի առաջին նիստը կայացավ երեկ՝ ԱԺ նիստից հետո, որին մասնակցեցին ԱԺ պատգամավորներ Կամո Բարսեղյանը, Հրանտ Սաֆարյանը, Վահան Բադասյանը:

Հիշեցնենք, որ Արցախի գազալցակայաններում գազի 1 խմ-ի գինը մոտ 290 դրամ է, մինչդեռ Հայաստանում գինը տատանվում է 170-200 դրամի միջակայքում:

ԱՐՄԻՆԵ ՆԱՐԻՆՅԱՆ

Կառավարությունը հստակ պատասխան չուներ գնաճի հարցին

Կառավարության հետ հարցուպատասխանի ընթացքում ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Վահրամ Բալայանը կառավարությանն ուղղեց ԼՂՀ-ում գնաճի վերաբերյալ հարց. «ԼՂՀ-ում 2008-2012թթ. ժամանակահատվածում գնաճի միջին տարեկան թիվը կազմում է 5.7%, իսկ ՀՀ-ում՝ 8.1 %: Սակայն փաստն այն է, որ անզեն աչքով էլ տեսանելի է, որ ԼՂՀ-ում ապրանքները 10-30% ավելի թանկ են, քան ՀՀ-ում: Այդ դեպքում՝ ինչպե՞ս հասկանալ, որ ՀՀ-ում գնաճն ավելի բարձր է, քան ԼՂՀ-ում»:

Հարցին ի պատասխան՝ ԼՂՀ ֆինանսների նախարար Սպարտակ Թեւոսյանը ներկայացրեց ԿԲ 2015 թվականի գնաճի կանխատեսումները, սակայն բարձրացված հարցին հստակ պատասխան չտվեց:

Վահրամ Բալայանը նշեց, որ հարցը ոչ թե կանխատեսումների, այլեւ վերջին տարիների իրողության մասին է: Այսինքն՝ արդյո՞ք այդ թիվը ճիշտ է ներկայացնում մեր տնտեսության, ժողովրդի կենսամակարդակի իրական պատկերը:

Ա. ՆԱՐԻՆՅԱՆ

Արցախյան շարժման 26-ամյակին նվիրված քննարկումներ

ԱԺ ՀՅԴ խմբակցության եւ ԱԵՄ-ի նախաձեռնությամբ փետրվարի 20-ին ԱրՊՀ գիտխորհրդի դահլիճում կազմակերպվեց «Արցախյան շարժումը եւ դրա օբյեկտիվ պայմանները» խորագրով կլոր սեղան: Կլոր սեղանին մասնակցում էին ԼՂՀ խորհրդարանական երեք խմբակցությունների ներկայացուցիչներ, շարժման առաջամարտիկներ, կուսակցությունների երիտթեւերի անդամներ, արցախյան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ուսանողներ:

Ըստ ԱԺ ՀՅԴ խմբակցության ղեկավար Արմեն Սարգսյանի՝ փետրվարի 20-ը իրավաբանորեն հիմք դրեց Արցախյան ազատագրական շարժմանը, եկավ արտացոլելու ժողովրդի հավաքական մտայնությունը եւ այն տեղափոխեց իրավական դաշտ:

Պարզաբանելով թեմայի ընտրությունը՝ նա նշեց. «Մենք փորձեցինք այնպես ընտրել թեման, որպեսզի այն չկապենք անձերի հետ, չգերագնահատենք անձերի դերակատարությունը: Փետրվարի 20-ը տրամաբանական շարունակությունն է արցախյան ժողովրդի պայքարի՝ այն ժամանակվանից, երբ Արցախը բռնակցվեց Ադրբեջանին»:

ԱԺ ՀՅԴ խմբակցության անդամ, պատմաբան Վահրամ Բալայանի կարծիքով՝ արցախահայության համար պետականություն ունենալը նոր բան չէ. դարեր շարունակ մենք ունեցել ենք պետականություն:

«Մեծ Հայքի տարբեր հատվածներում մենք կորցնում էինք մեր պետականությունը, սակայն Արցախի ժողովուրդը բազում դարերի ընթացքում իր մեջ ամբարել է պետականության փորձը: Այն ժողովուրդները, որոնք ընկալում են բանաձեւը, որ ազատությունն ու անկախությունը ոչ թե տրվում, այլ նվաճվում են, կարողանում են դիմակայել մարտահրավերներին եւ ապրել»,- ասաց նա:

Վահրամ Բալայանը նշեց, որ ազգային իշխանությունը փոքր ժամանակում չի ստեղծվում. դա երկարատեւ գործընթաց է, որ պետք է անցնել: Մի մասը դա անցնում է մեծ ցնցումների միջոցով, որոշ երկրներ էլ կարողանում են իրենց մեջ խոհեմություն գտնել եւ իրականում ստեղծել ազգային իշխանություն:

«Մենք ազատություն ձեռք բերեցինք կայսրության փլուզումից հետո: Սա բավականին օրինաչափ երեւույթ է, քանի որ ոչ մի կայսրություն չի հանդուրժում ոչ ժողովրդավարությունը, ոչ էլ ազգային իշխանությունը: Հույս ունեմ՝ մեր ժողովուրդը կցուցաբերի բավականաչափ խոհեմություն՝ բոլոր խնդիրները հաղթահարելու մեր իսկ միջոցով, մեր բաժին մասնակցությունն ունենալով պետականության կերտման գործում, ոչ թե հույսեր կապելով ուրիշների հետ»,- ասաց նա:

ԱԺ ԱԺԿ խմբակցության անդամ Վարդգես Բաղրյանը կարծիք հայտնեց, որ պայմանական է Շարժման 20-ամյակ ասելը, քանի որ Շարժումն իրականում շատ ավելի վաղ է սկսվել:

Ա.Ն.

ԼՂՀ ԱԺ խմբակցությունները դատապարտում են 1988թ. Սումգայիթի ցեղասպանությունը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների եւ պատգամավորական խմբի հայտարարությունը Սումգայիթ քաղաքում հայ բնակչության ջարդերի 26-րդ տարելիցի առթիվ

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը, արձագանքելով արցախահայության գերակշիռ մեծամասնության ձգտումներին եւ առաջնորդվելով Խորհրդային Միության սահմանադրությամբ, ընդունեց որոշում՝ ինքնավար մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու եւ Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու մասին:

Դա պատմական արդարությունը վերականգնելու իրավաբանորեն հիմնավորված քայլ էր, որը բխում էր 1985թ. ԽՍՀՄ-ում սկսված վերակառուցման քաղաքականության ոգուց: Ի հակակշիռ արցախահայության օրինական ձգտումների՝ Ադրբեջանի իշխանությունները փետրվարի 27-29-ը կազմակերպեցին եւ իրականացրին Սումգայիթ քաղաքի հայ բնակչության դաժան կոտորածն ու բռնատեղահանությունը:

Շուրջ 20 000 հայեր կորցրին իրենց իսկ ձեռքով կառուցված քաղաքում ապրելու իրավունքը, ենթարկվեցին անմարդկային նվաստացումների եւ ունեզրկման, իսկ տասնյակ հայորդիներ գազանաբար սպանվեցին ու խոշտանգվեցին: Սումգայիթով սկսվեց Ադրբեջանի հայության բռնատեղահանումն ու ֆիզիկական ոչնչացումը, մի քաղաքականություն, որ շարունակվեց այդ հանրապետության բոլոր բնակավայրերում, որտեղ պատմականորեն հայեր էին բնակվում, եւ իր բարձրակետին հասավ 1991թ. տարեվերջին, երբ Լեռնային Ղարաբաղը, հիմնվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների եւ այդ պահին դեռեւս գործող՝ ԽՍՀՄ սահմանադրության եւ օրենքների վրա, հռչակեց իր անկախությունը եւ ենթարկվեց Ադրբեջանի զինված նախահարձակմանը:

Արձանագրելով վերոհիշյալը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները եւ պատգամավորական խումբը՝

- դատապարտում են 1988թ. փետրվարի վերջին օրերին Սումգայիթ քաղաքում հայ բնակչության դեմ կատարված ցեղասպանությունը, որի համար պատասխանատվությունը վաղեմության ժամկետ չունի,

- գլուխ են խոնարհում բոլոր անմեղ քաղաքացիների հիշատակի առջեւ, ովքեր դարձել են քսենոֆոբիայի զոհ,

- միջազգային հանրության ուշադրությունն են հրավիրում Ադրբեջանում շարունակվող հակահայկական պետական քաղաքականության վրա, որը խոչընդոտում է նաեւ տարածաշրջանում տեւական խաղաղություն հաստատելու՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ջանքերը:

26 փետրվարի, 2014թ.
ք. Ստեփանակերտ

Սումգայիթ. իրական ցեղասպանություն

Սումգայիթ: Այս քաղաքի անվանումը հայերիս համար դարձել է ոճրագործության, հանցագործության ու դաժանությունների հոմանիշ: Խորհրդային եւ ադրբեջանական իշխանությունները ջանք ու եռանդ չխնայեցին, որպեսզի Սումգայիթում, իսկ հետո նաեւ Բաքվում, Կիրովաբադում, Հյուսիսային Արցախում եւ հայաբնակ այլ վայրերում տեղի ունեցած իրական դեպքերը թաքցնեն եւ այն որակեն որպես խուլիգանություն: Սումգայիթյան հանցագործությունը դեռեւս չի ստացել իրական իրավական որակավորում եւ անպատիժ է մնացել, իսկ անպատժելիությունը ծնում է նորանոր հանցագործություններ:

Կատարվածի իրավական որակավորումը հետեւյալն է.

Այն, ինչ տեղի է ունեցել Ադրբեջանում 1988-ին եւ շարունակվել 1990-1991թթ. Բաքվում, Կիրովաբադում, Հյուսիսային Արցախում եւ Ադրբեջանի այլ հայաբնակ վայրերում, անկասկած ցեղասպանություն է: Նրանց համար, ովքեր թերահավատորեն կընդունեն վերոնշյալ խոսքերը, պետք է նշել, որ 1988-ից մինչեւ 1991թ. Ադրբեջանում հայ ազգաբնակչության նկատմամբ կատարվածը միջազգային իրավունքը որակում է որպես ցեղասպանություն, այսինքն՝ այդ ոճրագործությունն իր մեջ ներառում է ցեղասպանություն միջազգային հանցագործությունը որակավորող բոլոր հատկանիշները: Այն նպատակաուղղված էր Ադրբեջանում բնակվող, ազգությամբ հայ քաղաքացիների բնաջնջմանը՝ սպանություններ, լուրջ մարմնական վնասվածքների եւ հոգեկան խանգարումների պատճառում, դիտավորյալ ստեղծվել է այնպիսի կենսական պայմաններ, որն ուղղված էր ազգությամբ հայ քաղաքացիների ոչնչացմանը:

Միջազգային իրավունքը ցեղասպանությունը դասում է ամենավտանգավոր միջազգային հանցագործությունների շարքը, որը վտանգում է ողջ միջազգային հանրությանը: 1988-ից առ այսօր Ադրբեջանը խախտել է եւ շարունակում է խախտել միջազգային իրավունքը՝ անտեսելով միջազգային իրավական համակարգը: Ադրբեջանը միանշանակորեն պետք է պատասխանատվություն կրի հայ ժողովրդի եւ ողջ միջազգային հանրության առջեւ իր կատարած հանցագործությունների համար:

Պետությունները միջազգային-իրավական պատասխանատվության ենթարկվում են միջազգային հանցագործություններ կատարելու համար: Միջազգային իրավունքը միջազգային հանրության համար առավել ծանր եւ վտանգավոր հանցագործությունների շարքին է դասում ցեղասպանությունը, ագրեսիան, ինքնիշխանության անօրեն սահմանափակումը, ռազմական միջամտությունը, պատերազմ հրահրելը, ինքնիշխանության նկատմամբ ոտնձգությունը. թերեւս Ադրբեջանը 1988-ից առ այսօր չի շրջանցել վերը նշված միջազգային ծանրագույն հանցագործություններից ոչ մեկը, ուստի Ադրբեջանն անհապաղ պետք է ենթարկվի պատժի՝ միջազգային իրավահամակարգով նախատեսված կարգով:

Անպատիժ մնալով իր կատարած հանցագործությունների համար՝ ադրբեջանական իշխանությունները շարունակում են կատարել նորանոր միջազգային հանցագործություններ՝ հակահայկական հիստերիայի քարոզում, պատերազմական գործողությունների վերսկսման հրահրում եւ սպառնալիքների հնչեցում, Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանության նկատմամբ ոտնձգություններ կատարելու սպառնալիքներ եւ այլն: Անպատժելիությունը եւ միջազգային հանրության կողմից երկակի չափանիշների կիրառումը ծնում են նոր ոճրագործություններ, ինչպիսին եղավ մարդասպան Ռամիլ Սաֆարովի հերոսացումը: Թող պարոն Օբաման եւ մյուսները չզարմանան, թե ինչպես կարելի է մարդասպանին հերոսացնել, քանի որ անպատժելիությունն ու ամենաթողությունը բերեց դրան եւ դեռեւս կարող է առաջացնել ավելի ծանրագույն հանցագործություններ: Եվ, փոխանակ միջազգային հանրությունը համապատասխան որակավորում տա այդ հանցագործությանը՝ որպես ցեղասպանություն, ինչի համար անհերքելի փաստեր կան, նախընտրում է այն անվանել անհասկանալի մի բառով՝ «pogroms», որը թերեւս որեւէ իրավական կամ այլ նշանակություն չունի: Միջազգային հանրությունն Ադրբեջանին՝ իր կատարած հանցագործությունների համար չենթարկելով պատասխանատվության եւ չդատապարտելով սումգայիթյան ցեղասպանությունը, նպաստեց, որ նման ոճրագործություններ կրկնվեն աշխարհի տարբեր վայրերում՝ Բոսնիայում, Ռուանդայում, Դարֆուրում եւ այլուր՝ ակամա մեղսակից դառնալով նաեւ աշխարհում կատարված եւ կատարվող նորանոր ցեղասպանություններին:

Ահա, թե ինչի համար են կարեւորվում սումգայիթյան ցեղասպանության ճանաչումը եւ դատապարտումը, ինչպես նաեւ Ադրբեջանին համապատասխան միջազգային պատասխանատվության ենթարկելը: Այն կարեւոր է ոչ միայն հայ ժողովրդի, այլեւ ողջ միջազգային հանրության համար:

Ցավոք, մենք նույնպես հաճախակի անտարբերություն ենք ցուցաբերում այս հարցին, ու մեր մամուլում ադրբեջանական ոճրագործությունների մասին խոսվում է միայն դրանց տարելիցների ժամանակ կամ դրանց հետ կապված ինչ-որ միջոցառումներ կազմակերպելու առնչությամբ, եւ, որ ավելի ցավալի է, չենք կոչում այդ ոճրագործություններն իրենց անունով՝ ցեղասպանություն:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գերմանական մամուլը պատռում է Ադրբեջանի վարչակարգի դեմքը

Օրերս գերմանական հեղինակավոր Die Zeit թերթը «Կեղտոտ գիտնականներ» վերտառությամբ հոդված է հրապարակել, որտեղ բացահայտում է ադրբեջանական դեսպանատան նավթադոլարների տակ հայտնված գիտնականների գործունեությունը եւ մանրամասնորեն նկարագրում Ադրբեջանում տիրող ժողովրդավարության անմխիթար վիճակն ու կոռումպացված վարչակարգը:

Օրաթերթը իր ուշադրության տակ է առել Բեռլինի Հումբոլդտ համալսարանի՝ 2010 թվականին բացված ադրբեջանական պատմության եւ մշակույթի ամբիոնը ու ամբիոնի ղեկավար Մարիա Եվա Աուխին:

Հոդվածագիրը տարօրինակ է համարում, որ գերմանական համալսարանում գործող ամբիոնի գործունեության համար եւ մասնավորապես պրոֆեսոր Աուխին վճարում է օտարերկրյա պետության դեսպանատունը, եւ ավելացնում, որ ավելի տարօրինակ է, երբ խոսքն այնպիսի երկրի մասին է, որին Amnesty International, Human Rights Watch միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները մեղադրում են ժողովրդավարության բացահայտ պակասի եւ մարդու իրավունքների ոտնահարման մեջ: Հոդվածում նշվում է, որ վերը նշված ամբիոնը ուղղակիորեն ֆինանսավորվում է Գերմանիայում Ադրբեջանի դեսպանատան կողմից, իսկ ամբիոնի ղեկավար Մարիա Եվա Աուխին տարեկան, որպես աշխատավարձ, վճարվում է 75000 եվրո: Ադրբեջանի

դեսպանատունը նաեւ ֆինանսավորում է ամբիոնի շրջանակներում տեղի ունեցող բոլոր միջոցառումները:

Հոդվածում նաեւ մանրամասն նկարագրվում է Ադրբեջանում տիրող ժողովրդավարության անմխիթար վիճակը եւ նշվում, որ Ադրբեջանը համարվում է անարդար երկիր. ցույցերը կոպտորեն ճնշվում են, մամուլը, խոսքի ազատությունը զգալիորեն սահմանափակված են: Մամուլի ազատության ռեյտինգով Ադրբեջանը 156-րդն է: Հոդվածում նշվում է, որ նավթով հարուստ երկրի նավթ եւ գազ արդյունահանող կազմակերպությունները գտնվում են ադրբեջանական իշխող վերնախավի ձեռքում: Երկրում նաեւ լայնորեն տարածված է կոռուպցիան: Transparency International կազմակերպության կոռուպցիայի մակարդակի ինդեքսով՝ Ադրբեջանը Մալիի եւ Պակիստանի հետ 127-րդ տեղում է: Ադրբեջանի մասին այսպիսի տվյալներ է բերում գերմանական թերթը:

Գերմանական թերթը նաեւ քննադատում է Իլհամ Ալիեւի վարչակարգը եւ անվանում այն բռնատիրական կառավարում: Թերթը խոսում է նաեւ Ադրբեջանի «խավիարային դիվանագիտության» մասին: «Բաքու հրավիրված եվրապատգամավորները ճոխ նվերներով են պարգեւատրվում, այդ թվում նաեւ՝ խավիարով եւ մետաքսե գորգերով: Դրա համար հատուկ տերմին է հորինվել՝ «խավիարային դիվանագիտություն»: Ռեժիմն ուզում է պահպանի իր իմիջն Արեւմուտքում: Հենց դրան պիտի օգնի տիկին Մարիա Եվա Աուխը»:

Հոդվածագիրը նաեւ արդարացիորեն իր կասկածներն է հայտնում ամբիոնի եւ պրոֆեսոր Աուխի գործունեությանը՝ նշելով, որ Ադրբեջանի կոռումպացված վարչակարգը ոչ թե ցանկանում է օգնել գիտության զարգացմանը, այլեւ սեփական շահերն է հետապնդում:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եվրախորհրդարանը կտրում է Բաքվի կեղտոտ ձեռքը

Եվրախորհրդարանի էթիկայի հանձնաժողովը փետրվարի 11-ին կայացած նիստի ժամանակ նկատողություն է տվել եվրախորհրդարանի 9 պատգամավորների՝ 2013թ. հոկտեմբերին Ադրբեջանում անցկացված նախագահական ընտրություններում դիտորդական առաքելություններ իրականացնելու ժամանակ Ադրբեջանից կաշառք վերցնելու համար: Դատապարտման են ենթարկվել Քրիստինա Օյուլանդը (Էստոնիա), Յացեկ Վոլոսովիչը (Լեհաստան), Սլավի Բինեւը (Բուլղարիա), Իրժի Մաստալկան (Չեխիա), Իվո Վայգլը (Սլովենիա), Ալեքսանդրա Տեյնը (Գերմանիա), Հաննա Տակկուլան (Ֆինլանդիա), Օլեգ Վալժալոն (Խորվաթիա) եւ Նիկ Գրիֆֆինը (Մեծ Բրիտանիա):

Նրանք հրավիրվել էին պաշտոնական Բաքվի կողմից՝ ընտրություններում որպես դիտորդ հանդես գալու համար: Այդ մասին նրանք հրապարակայնորեն չեն հայտարարել, ինչը պարտադիր պահանջ է եվրապատգամավորի նոր կանոնակարգով, որի համաձայն՝ ցանկացած երկրի հրավերի դեպքում, որի ընթացքում կծախսվի 150 եվրոյից ավելի գումար, պետք է հայտարարվի օրենսդիրի պաշտոնական կայքում:

Եվրախորհրդարանի էթիկայի հանձնաժողովը քննում է նաեւ Ադրբեջանում այդ պատգամավորներին տրված դրամական պարգեւատրման հարցը:

Ադրբեջանի նախագահական ընտրություններն այս պատգամավորները գնահատել են որպես ազատ եւ արդար ընտրություններ: Այդ գնահատականը լիովին տարբերվում էր ԵԱՀԿ եւ միջազգային այլ կառույցների կողմից ընտրություններին տրված գնահատականներից, որոնց մեջ նշվում էր, որ ընտրու-

թյուններն անց են կացվել խոսքի եւ հավաքների ազատության խախտման լուրջ խնդիրներով:

Այս ամենը դուր չի գալիս պաշտոնական Բաքվին: Եվ արդեն սկսվել են հերյուրանքների եւ անիմաստ հայտարարությունների տարափը:

Եվրանեստի խորհրդարանական վեհաժողովում («Արեւելյան գործընկերության» ծրագրի շրջանակներում Եվրախորհրդարանի ստեղծած հատուկ մարմին) ադրբեջանական պատվիրակության ղեկավար Էլխան Սուլեյմանովը հայտարարություն է տարածել, որում նա քննադատում է Եվրախորհրդարանի այդ գործողությունները եւ ասում, որ իբր այդ գործողությունները կազմակերպվում են հատուկ ուժերի կողմից, որպեսզի Ադրբեջանի վրա ճնշումներ գործադրեն: Նրա խոսքերով՝ իբր այդ ուժերը փորձում են Ադրբեջանը ներկայացնել որպես ավտորիտար երկիր, որպեսզի միջազգային հանրության ուշադրությունը շեղեն այսպես կոչված «հայերի կողմից Ադրբեջանի 20 տոկոս բռնազավթած հողերի» հարցից: Նա նաեւ ասում է, որ իբր նման գործողություններով փորձ է արվում Ադրբեջանին ստիպել միանալ Ասոցացման համաձայնագրին, որին հակառակվելու դեպքում դա համարվում է ազդանշան, որ Ուկրաինայում կատարվող իրադարձությունները կարող են կրկնվել նաեւ Ադրբեջանում: Նա նաեւ եվրախորհրդարանին մեղադրում է, որ Եվրախորհրդարանը Ուկրաինայում տեղի ունեցող դեպքերի ֆոնին՝ երբեք իր պատգամավորներից չի հարցրել, թե ինչ աղբյուրներից են ֆինանսավորվում Ուկրաինա կատարած նրանց այցելությունները, քանի որ դա բխում է իրենց շահերից:

Ինչպես տեսնում ենք՝ Բաքվի պաշտոնյաները սկսել են իրենց դեմ գործող ինչ որ անհայտ ուժեր փնտրել: Սուլեյմանովի խոսքերում որեւէ լուրջ ու առողջ միտք չկա: Նա պարզապես ցանկալին տեսնում է իրականության փոխարեն՝ անիմաստ հերյուրանքներ ու մեղադրանքներ շպրտելով Եվրախորհրդարանի հասցեին:

Հիշեցնենք, որ Ադրբեջանն իր մասնակցությունը Եվրանեստի ԽՎ-ի աշխատանքներին սառեցրել է: Ադրբեջանական ոչ իշխանամետ ՁԼՄ-ները հավաստիացնում են, որ Սուլեյմանովը դա արել է «ինքնակամ» որոշմամբ:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նոր համագործակցություն Արցախի եւ Ֆրանսիայի միջեւ

Փետրվարի 21-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութ եւ Ֆրանսիայի Վիեն քաղաքների միջեւ ստորագրվել է Բարեկամության հռչակագիր: Ստորագրման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Վիենի քաղաքապետարանում:

Հադրութ քաղաքի անունից հռչակագիրը ստորագրել է աշխատանքային այցով Ֆրանսիայում գտնվող ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը, Վիեն քաղաքի անունից՝ քաղաքապետ Ժակ Ռեմիլյեն:

Հռչակագիրը ողջունում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի եւ իշխանությունների հետեւողական քայլերը՝ ուղղված ազատ եւ ժողովրդավարական հասարակություն ստեղծելուն ու զարգացնելուն, եւ անընդունելի է համարում Արցախի ժողովրդի մեկուսացումը: Այն նպատակ ունի զարգացնել երկու քաղաքների միջեւ բարեկամական կապերը եւ խրախուսել համագործակցությունը կրթության, մշակույթի, սպորտի եւ մի շարք այլ բնագավառներում:

2013 թ. բարեկամական կապեր են հաստատվել նաեւ ԼՂՀ Մարտունի եւ Ֆրանսիայի Լե-Պեն-Միրաբո քաղաքների միջեւ. տեղի են ունեցել փոխայցելություններ, քննարկվում են քաղաքների միջեւ համագործակցության զարգացման ուղիներն ու ձեւերը:

Այս մասին հաղորդում է ԼՂՀ արտաքին գործերի մամլո ծառայությունը:

Նիդերլանդների ՀՅԴ Հայ Դատի հանձնախումբը հանրահավաք եւ բողոքի ցույց էր կազմակերպել Ադրբեջանի դեսպանության առջեւ

Նիդերլանդների ՀՅԴ Հայ Դատի հանձնախումբն փետրվարի 27-ին հանրահավաք եւ բողոքի ցույց էր կազմակերպել Հաագայում գտնվող Ադրբեջանի դեսպանության առջեւ: Ցույցը նվիրված էր 1988 թվականի Սումգայիթյան ջարդերի զոհերի հիշատակին եւ ընդդեմ Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականությանը Արցախի հարցում: Հոլանդիայի բոլոր նահանգներից հարյուրի հասնող ցուցարարներ Հաագա էին եկել եւ, չնայած եղանակային անբարենպաստ պայմաններին, բողոքի հզոր ցույց անցկացրեցին: Ելույթ ունեցան նաեւ ՀՅԴ ՆԵՄ, «Գարեգին Նժդեհ»-ի անդամները եւ դատապարտեցին Ադրբեջանի նենգ քաղաքականությունը պատմությունը կեղծելու եւ սեփական ժողովրդին եւ աշխարհին մոլորության մեջ գցելու փորձերը:

Հայ Դատի հանձնախմբի կողմից նախօրոք դիմում էր կատարվել Ադրբեջանի դեսպանություն պահանջագիր ներկայացնելու համար, սակայն այն մնացել էր անպատասխան: Ցուցարարների եւ ողջ հոլանդահայության անունից պահանջագիրը ընթերցվեց եւ նետվեց դեսպանության փոստարկղը:

ՀՅԴ Հայ դատի հանձնախմբի նախագահ՝ Մասիս Աբրահամյան Նիդեռլանդների Հայ Յեղափոխական Դաշնակցության Հայ Դատի հանձնախումբ

Հաագայում Ադրբեջանի հանրապետության դեսպան, պարոն՝ Միր Համզա Էֆենդիեւին

ՊԱՀԱՆՋԱԳԻՐ

27 փետրվարի 2014 թ.

Մեծարգո պարոն դեսպան

Նիդեռլանդների ՀՅԴ Հայ Դատի հանձնախումբը հոլանդահայության անունից ձեզ է ներկայացնում հետեւյալ պահանջագիրը.

ՊԱՀԱՆՋԱԳՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. Արցախի հայ ազգաբնակչությունը հազարամյակներ շարունակ ապրել եւ արարել է Արցախ աշխարհում եւ այդ երկրամասի լիարժեք իրավատերն է: Դրա վառ ապացույցներն են հազարամյա պատմական կոթողներն ու հուշարձանները, որոնք, չնայած ասպատակումների դեռ մեծ թվով կանգուն են եւ նշմարելի Արցախի յուրաքանչյուր հատվածում:

2. Որպես անկախ եւ ինքնավար պետություն՝ Արցախը սակայն պատմության ընթացքում չի ստացել իր իրավական կարգավիճակը եւ միշտ գտնվել է տարբեր զավթիչների տիրապետության տակ: Այդուհանդերձ պահպանել է իր գերակշռող հայ ազգաբնակչությունը եւ բոլոր ժամանակներում եղել է հայկական տարածք՝ հատկապես իր բնակչության կազմով:

3. Վերջին պատմական զավթիչը խորհրդային բռնապետությունն էր, որը հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների մեջ թշնամանք առաջացնելու եւ բորբոքելու հստակ միտումով ստալինյան խայտառակ հրամանագրով Արցախը բռնակցեց Ադրբեջանի Խորհրդային Հանրապետությանը:

4. Ինչպես երբեք, այս անգամ էլ Արցախի ազատասեր ժողովուրդը չհաշտվեց նման անարդարության հետ եւ, տարիներ շարունակ պայքարելով, վերջապես արտահայտեց իր կամքը՝ ինքնավար, ազատ եւ անկախ ապրելու:

5. Ադրբեջանի կառավարությունը ըմբռնումով մոտենալու փոխարեն Արցախի ժողովրդի արդար պահանջին, գնաց խնդիրը արյունահեղ հակամարտության վերածելու ճանապարհով եւ 1988 թվականի փետրվարի 26-29-ը ընկած ժամանակահատվածում Սումգայիթում հարյուրավոր հայ քաղաքացիների սպանդի ենթարկելով փորձեց խեղդել արցախահայության ազատատենչ ոգին: Չլիներ այս արյունահեղությունը, հնարավոր էր թերեւս խնդիրը խաղաղ բանակցությունների ճանապարհով լուծել: Սակայն այս սպանդով սկիզբ դրվեց ատելության եւ թշնամանքի, որը վերածվեց ահեղ պատերազմի:

6. Հետագա տարիներին Ադրբեջանը չհրաժարվեց իր հարձակողական քաղաքականությունից եւ փորձեց ուժի ու բռնության միջոցներով ճնշել արցախահայության ազատ կամքի արտահայտման իրավունքը: Այս կեցվածքը հանգեցրեց դաժան պատերազմի երկու հարեւան ազգերի միջեւ եւ տասնյակ հազարավոր զոհերի պատճառ դարձավ երկու կողմերից:

7. 1994 թվականին կնքված հրադադարի միջոցով տիրում է համեմատական խաղաղություն, որը սակայն մշտապես խախտվում է Ադրբեջանական կողմի դիվերսիոն գործողություններով եւ մարդասպան դիպուկահարների դավադիր սպանություններով, որոնք խափանում են հարատեւ եւ կայուն խաղաղության ստեղծման գործընթացը:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, չնայած Ադրբեջանի ռազմատենչությանը, քսան տարիների ընթացքում վերածվել է կայացած մի պետության եւ կայուն քայլեր է կատարում ժողովրդավար ու իրավական պետության ստեղծման ճանապարհին:

9. Ադրբեջանի ներկայիս իշխանությունները որդեգրել են խիստ ոչ կառուցողական դիրքորոշում եւ սպառազինությունների մրցավազքով եւ հայատյաց քարոզչությամբ սեփական ժողովրդին մոլորության մեջ են գցում նոր պատերազմի ծրագրերով:

Ելնելով վերոհիշյալից՝ այսօր մենք ողջ հոլանդահայության անունից ձեզ ենք ներկայացնում հետեւյալ պահանջները.

ՊԱՀԱՆՋԱԳԻՐ

1. Անմիջապես դադարեցրեք բռնությունների եւ ուժի բոլոր տեսակի դրսեւորումները եւ խնայեք ո՛չ միայն հայ զինվորների կյանքը, այլ նաեւ ձեր սեփական զինվորներինը, քանի որ յուրաքանչյուր ռազմական գործողություն ստանում է իր համարժեք պատասխանը եւ երիտասարդ կյանքեր են ոչնչանում:

2. Ճանաչե՛ք եւ հարգե՛ք Արցախի ժողովրդի ազատ, անկախ եւ ինքնուրույն ապրելու իրավունքը եւ բանակցություններ սկսեք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարության հետ:

3. Դադարեցրեք հայատյաց քաղաքականությունը ամբողջ աշխարհում եւ մի գցեք ձեր ժողովրդին մոլորության մեջ՝ նրանց սնելով պատերազմը վերսկսելու մոլուցքով: Պատերազմի վերսկսումը առաջին հերթին մեծագույն ողբերգություն կլինի հենց Ադրբեջանի ժողովրդի համար:

4. Փորձեք հարեւան ժողովրդների միջեւ խաղաղության եւ բարիդրացիական հարաբերությունների հիմքեր դնել եւ ոչ թե նոր պատերազմներ սանձազերծել:

Սույն պահանջագիրը ողջ հոլանդահայության անունից հանձնվում է ձեզ 2014 թվականի փետրվարի 27-ին տեղի ունեցած հանրահավաքի արդյունքում:

ՀՅԴ Նիդեռլանդների Հայ Դատի հանձնախումբ

Կարոտը կդառնար 50 տարեկան



«Փետով լինի, կացինով լինի, թե որսորդական հրացանով... միեւնույն է, հայր, մենք հաղթելու ենք: Թշնամու ոտքը հայի տուն չի մտնի, բայց հայի ոտքը պետք է թշնամու տանը լինի միշտ...»: ԿԱՐՈՏ ՄԿՐՏՉՅԱՆ

Փետրվարի 19-ին Արցախյան հերոսամարտի հերոս Կարոտ Մկրտչյանը կդառնար 50 տարեկան: Ծնվել է 1964թ. փետրվարի 19-ին, Սիրիայում: Հայրենասիրական ոգով դաստիարակված Կարոտը հասակ է առել Պռոշյան գյուղում: Պատանի հասակում զբաղվել է ըմբշամարտով:

Կարոտը Արցախյան շարժման հենց սկզբից նվիրվել է Հայաստանի սահմանների պաշտպանությանը եւ Արցախի գոյապայքարին: 1989-ից եղել է Պռոշյանի դաշնակցական ջոկատների ընդհանուր հրամանատարը: 1990թ. աշնանը Կարոտի խումբը Նոյեմբերյան-Շամշադին գծից վերադառնալուց հետո մեկնում է Հյուսիսային Արցախ, ուր Շահեն Մեղրյանի հրամանատարությամբ համալրում է Շահումյանի պաշտպանական ուժերը: Զենք-զինամթերքի հայթայթումից զատ, Կարոտն իր ընկերների՝ Պետոյի եւ Հրաչի հետ միասին, շրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար կարճ ժամանակում տեղացի ուժերից ստեղծում է նոր մարտական խմբեր, սովորեցնում նրանց զենքի ու մարտարվեստի նրբությունները:

1991թ. ապրիլի 18-ին Պռոշյանի, Բաղրամյանի, Հրազդանի ջոկատները միանում են Գետաշենի՝ Թաթուլ Կրպեյանի հրամանատարության տակ գտնվող խմբերին: Կարոտի խումբը տեղափոխվում է Մարտունաշենի դիրքեր՝ համալրելու Սիմոն Աչիգյոզյանի հրամանատարությամբ գործող ջոկատը: Այդ օրերին հատկապես մեծ արձագանք գտավ 1991թ. ապրիլի 30-ին Օղակ 1-ին գործողության ժամանակ Սիմոն Աչիգյոզյանի եւ «Արաբո» ջոկատի համագործակցությամբ Կարոտի առաջնորդած ազատամարտիկների մղած կռիվը Մարտունաշենում՝ խորհրդային բանակի զինվորների եւ ադրբեջանական ՕՄՕՆ-ի դեմ:

1991թ. Կարոտը նշանակվեց Ստեփանակերտի՝ Աշոտ Ղուլյանի 1-ին վաշտի գրոհային դասակի հրամանատար: Կարոտի խումբը մասնակցեց Լեսնոյի եւ Խոջալուի ազատագրմանը, ինչպես նաեւ՝ Ումուդլուի, Փարուխի եւ Մալիբեյլիի մարտերին: Ընդառաջելով Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության եւ անձամբ Շահեն Մեղրյանի համառ պահանջներին՝ Պռոշյանի ջոկատը ստանում է քսանինը միավոր զենք (ինքնաձիգներ, գնդացիրներ ու նռնականետ) եւ Շուշիի գրոհից մի քանի օր առաջ ուղղաթիռով, Կարոտի եւ Պետոյի հրամանատարությամբ մեկնում Շահումյան ու տեղի ինքնապաշտպանական խմբերի համագործակցությամբ ստանձնում Բուզլուխի պաշտպանությունը: Այդ օրերին Կարոտը, հոգում խեղդելով Շուշիի ազատագրմանը մասնակցելու ցանկությունը, անկեղծ հավատով կրկնում էր. «Տարբերություն չկա, թող մեր ընկերներն ազատագրեն Շուշին, իսկ մենք՝ Գետաշենն ու Մարտունաշենը»: Եվ ավելի անհողդողդ էր դառնում. «Մինչեւ Գետաշենն ու Մարտունաշենը չազատագրենք, ես Ղարաբաղից տուն չեմ վերադառնա»:

Պռոշյանցի մարտիկները դիրքեր են գրավում Ջամբազի լեռնագագաթի 29-րդ հենակետում: Մի քանի օր անց նրանց են միանում Նոր Երզնկայի մարտախումբը՝ Սարո Փամբուխչյանի գլխավորությամբ, իսկ Շուշիի եւ Լաչինի գործողություններից հետո՝ նաեւ բուժականցիներ Մուրադը, Պավլիկը, Ազատն ու Ֆելիքսը, ինչպես նաեւ՝ բաղրամյանցի Մանվելը: Նույն օրերին նահիրցիների հարեւանությամբ Ջամբազի 25-րդ հենակետում է հաստատվում Սասուն Սիմոնյանի գլխավորած ալավերդցիների խումբը: Վերոհիշյալ խմբերն ու պռոշյանցիների ջոկատը գործում էին Կարոտի ընդհանուր հրամանատարությամբ: Հունիսի 13-ին ազերիների եւ Գյանջայի (Կիրովաբադ) շրջանում տեղակայված ռուսական հատուկ նշանակության դիվիզիաներից մեկի գերազանցող ուժերի եւ զրահատեխնիկայի դեմ մղած անհավասար եւ հերոսական մարտը վերջինը եղավ Կարոտի համար: Կարոտը կատարեց մի զարմանահրաշ քայլ, որն ընդունակ էր իրագործել միայն խելահեղ քաջությամբ ու անսասան վճռականությամբ օժտված մարդը: Գերազանց գիտենալով, որ բարձունքներում արդեն թշնամու հարյուրավոր զինվորներ են, նա, այնուամենայնիվ, աներկբայորեն վճռում է բարձրանալ իրենց նախկին դիրքերը: Նրա կատարած այդ քայլը հավասարազոր էր ինքնակամ նահատակության: Կարոտի անհետանալը Շահումյանում ցույց տվեց նրա՝ թշնամու դեմ կանգնելու ու պայքարելու վճռականությունը եւ պայքարելու անկոտրում կամքը:

«Թշնամու գնդակը ինձ երբեք չի դիպչի»,- ասում էր Կարոտը: «Շահումյանից հետո,- շեշտում էր հերոսը,- Ղարաբաղի դարպասը բաց է մնալու: Ոչ մի դեպքում չպետք է թողնել, որ ադրբեջանցիները տիրեն ու ամրապնդվեն այդ դիրքերում»: Իր խոսքն ավելի համոզիչ ու ազդեցիկ դարձնելու եւ ընկերներին առավելագույնս վճռականություն ու հաստատակամություն հաղորդելու նկատառումով հավելում է. «Եթե այսօր թշնամուն հանձնենք Շահումյանը, ապա վաղը կհանձնենք նաեւ Հայաստանը»:

Կարոտ Մկրտչյանը ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի եւ ՀՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ է:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Օլիմպիական նպատակասլացությամբ արցախցի մարզուհին

Միշտ հպարտանում ենք այն մարզիկներով, ովքեր մեր եռագույնի ներքո հանդես են գալիս միջազգային առաջնություններում, եւ առավել հպարտանում ենք, երբ նրանք նվաճում են բարձր տեղեր:

Արցախում սպորտի զարգացումը կարեւորելով՝ Ապառաժը հարցազրույց ունեցավ արցախցի մարզուհի, ձյուդոյի Հայաստանի բազմակի չեմպիոն, սամբոյի Հայաստանի չեմպիոն, միջազգային կարգի սպորտի վարպետ, եվրոպայի եւ աշխարհի սամբոյի առաջնության բրոնզե մեդալակիր Սոսե Բալասանյանի հետ:

Նա մասնակցել է մի շարք մրցումների եւ հիմնականում նվաճել առաջնակարգ տեղեր: Դեռեւս վաղ հասկից մասնակցել է միջազգային մրցումների եւ Վրաստանի Թբիլիսի քաղաքում անցկացված ձյուդոյի պատանիների մրցումներում զբաղեցրել երկրորդ տեղը: Մասնակցել է նաեւ Կազանում տեղի ունեցած ունիվեսիադային եւ զբաղեցրել 5-րդ տեղը: Իսկ վերջերս նվաճել է բրոնզե մեդալներ Իտալիայում անցկացված սամբոյի Եվրոպայի առաջնությունում եւ Ռուսաստանի Սանկտ Պետերբուրգ քաղաքում անցկացված սամբոյի աշխարհի առաջնությունում:

Սոսեն իր հասածով չի սահանափակվում: Նրա գերագույն նպատակը օլիմպիական չեմպիոն դառնալն է, որպեսզի, ինչպես ինքն է ասում, բարձրացնի հայկական դրոշը եւ բարձր պահի հայի անունը: Նա ներկայումս մեծ աշխատանքներ է տանում, որպեսզի իր մեծագույն նպատակն իրականանա: Վերջերս Ավստրիայում մասնակցել է միջօլիմպիական հավաքների, որոնց մասնակցում են աշխարհի լավագույն մարզիկները՝ հիմնականում մեդալակիրներ: Այս տարի, մարտ ամսին Չեխիայում կրկին օլիմպիական հավաքի պետք է մասնակցի, որից հետո Վրաստանում եւ Թուրքիայում կայանալիք ձյուդոյի աշխարհի գավաթի առաջնություններում հանդես գա (տարվա մեջ 3 հատ առաջնություն է լինում), որտեղ հաջողության հասնելու դեպքում կմասնակցի Բրազիլիայում կայանալիք 2016թ. ամառային օլիմպիադային:

- Ինչպե՞ս սկսեցիք հետաքրքրվել սպորտով:

- Արցախում ծնվելը արդեն իսկ հուշում է, որ մարդ պետք է լինի նպատակասլաց ու ամեն ինչ անի, որ իր ազգի անունը բարձր պահի: Ես ցանկացա դա անել սպորտի միջոցով:

- Ինչո՞ւ եք ընտրել հենց ձյուդո եւ սամբո մարզաձեւերը:

- Ես մանկուց ցանկացել եմ զբաղվել մարմնամարզությամբ (գիմնաստիկա), բայց քանի որ Արցախում այդ ժամանակ հնարավորություն չկար զբաղվել այդ մարզաձեւով, սկսեցի պարապել ձյուդո: Այդ մարտարվեստն ինձ դուր եկավ. ցանկացա լավ արդյունքի հասնել, դրա համար սկսեցի նվիրված պարապել:

- Չե՞ք փոշմանել:

- Ոչ, քանի որ ինձ համար ձյուդոն դարձել է ապրելակերպ, կյանքի իմաստ:

- Ո՞րն է կյանքում Ձեր ամենամեծ նվաճումները:

- Զբաղվելով մարտարվեստներով՝ ոչ միայն կոփում ես մարմինդ, այլ նաեւ՝ ստանալով սպորտի դաստիարակությունը, մտածելակերպդ է փոխվում: Ձյուդոն նաեւ տալիս է կամքի եւ հոգու ուժ, ինչպես նաեւ մարզում է մարմինն ու միտքը: Հենց սա է իմ ամենամեծ նվաճումը:

- Աղջկա համար դժվա՞ր չէ զբաղվել մարտարվեստներով:

- Ոչ, եթե սիրում ես քո գործը, հեշտությամբ ես հաղթահարում բոլոր խոչընդոտներն ու դժվարությունները:

- Ի՞նչ զգացողություն եք ունենում, երբ հաղթանակ եք տանում:

- Հաղթանակի դեպքում մեծ ուրախություն եմ զգում, որ իմ գործադրած ջանքերն արդյունք են տվել: Քանի որ իմ ամենամեծ նվաճումները դեռ առջեւում են, փոքր հաղթանակներն այդքան էլ շատ չեն գոհացնում ինձ:

- Աշխարհի բրոնզե մեդալը համարում եք փոքր հաղթանա՞կ:

- Այո, քանի որ հայը, հատկապես արցախցի հայը, միշտ պետք է առաջինը լինի:

- Իսկ Ձեզ համար այդ առաջինը ո՞րն է:

- Իմ ամենամեծ նպատակն է՝ նվաճել աշխարհի չեմպիոնի տիտղոսը, օլիմպիական ոսկե մեդալ ունենալ ու հնչեցնել հայոց օրհներգը օլիմպիական բարձունքներում:

- Իսկ պարտվելու դեպքում ի՞նչ եք զգում:

- Շատ ցավալի է լինում, քանի որ այդ պահին գիտակցում ես, որ պատրաստ ես, բայց չկարողացար կարողություններդ դրսեւորել: Ու պարտությունն առաջացնում է այնպիսի զգացողություն, երբ զգում ես, որ հաղթանակի համար պետք է ավելին անես: Երբեմն պետք է պարտվել հաղթանակի հասնելու համար:

- Իսկ ինչպե՞ս եղավ, որ ձյուդոյից բացի սկսեցիք նաեւ հանդես գալ սամբո մարզաձեւով:

- Սամբոյի նկատմամբ ուղղակի հետաքրքրություններ ունեի: Փորձեցի ուժերս Հայաստանի սամբոյի առաջնությունում եւ, մի քանի անգամ հաղթող ճանաչվելով, սկսեցի նաեւ միջազգայիմ մրցումներում հանդես գալ: Ինձ համար կարեւոր չէ սպորտաձեւի անվանումը, կարեւորը սպորտի մեջ հայ ազգի անունը բարձր պահելն է:

- Սամբոն եւ ձյուդոն նմա՞ն են իրար: Հե՞շտ է երկու մարզաձեւերով զբաղվելը:

- Շատ հնարքներ երկու մարզաձեւերին էլ բնորոշ են, բայց ձյուդոն ավելի դժվար է. այն նաեւ օլիմպիական սպորտաձեւ է: Սպորտով զբաղվելը միշտ էլ դժվարություններ է ենթադրում, բայց եթե սիրում ես՝ ամեն ինչ կարելի է անել:

- Եթե չզբաղվեիք սպորտով, ի՞նչ մասնագիտություն կընտրեիք եւ ինչո՞ւ:

- Մինչեւ պրոֆեսիոնալ սպորտով զբաղվելը միշտ ցանկացել եմ իրավաբանի մասնագիտություն ձեռք բերել, քանի որ մտածում էի, որ եթե լավ իրավաբան լինեի՝ կկարողանայի արդարություն պահել եւ պաշտպանել մարդկանց:

- Մրցումների ժամանակ որեւէ զավեշտալի դեպք հիշո՞ւմ եք:

- Այո, Ադրբեջանի սամբոյի ֆեդերացիայի նախագահի զարմացած դեմքն եմ հիշում: Երբ Սանկտ Պետերբուրգում անցկացված սամբոյի աշխարհի առաջնությունում բրոնզե մեդալ էի նվաճել, իմ քաշային կարգում հենց նա էր պարգեւատրողը: Տեսնելով ձեռքիս Արցախի Հանրապետության պետական դրոշը՝ իրեն կորցրեց եւ մեդալը տալուց հետո ծաղիկները չտվեց: Երբ ասիստենտն ասաց՝ իսկ ծաղիկները չե՞ք տալիս, տվեց ծաղիկները::

- Ի՞նչ կարգախոսով եք առաջնորդվում:

- Միշտ առաջնորդվում եմ հորս խոսքերով:

- Հանուն ձեր նպատակի՝ ինչի՞ց կհրաժարվեիք:

- Պետք չէ հրաժարվել որեւէ բանից, ուղղակի պետք է մեծ ջանքեր գործադրել՝ երբեմն հետաձգել անձնական ինչ-ինչ հարցեր:

- Արդյո՞ք արժանի գնահատականի եք արժանանում, ինչպես Դուք եք ասում՝ սպորտում մեր ազգի անունը բարձր պահելու համար:

- Այո, իհարկե: Ամեն մարդու համար կարեւոր է, որ իր գործը գնահատվում է: Սա ոգեւորում է եւ ավելի նպատակասլաց դարձնում:

- Վերջում ի՞նչ կավելացնեք:

- Ուզում եմ երախտագիտությունս հայտնել իմ մարզչին՝ Իվան Ազիզբեկյանին: Ուզում եմ ամեն ինչ անել, որպեսզի արդարացնեմ նրա սպասումները եւ այն դժվար աշխատանքը, որ ինքն է արել: Դրանով կբարձրացնեմ ե՛ւ մարզիչիս, ե՛ւ ազգիս անունը: Եվ կցանկանայի, որ Արցախում ձյուդոն, սամբոն եւ, ընդհանրապես, սպորտն ավելի զարգանա, ավելի շատ երիտասարդներ զբաղվեն սպորտով:

- Շնորհակալություն հարցազրույցի համար: Ցանկանում ենք հաջողություններ Ձեր սկսած գործում եւ թող իրականություն դառնա Ձեր գերագույն նպատակը՝ նվաճեք օլիմպիական ոսկին:

Պատրաստեց
Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ. 97 38 43, E-mail: info@aparaj.am
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 500: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Սեւակ ԽԱՉԱՏՐՅԱՆ